

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/2**

**21 հունվարի 2014 թ.**

Քննարկվեց «Ալաշկերտ» ԱԿ ներկայացուցչի բողոքը (մուտք ՀՀ ԿԱ ՊԵԿ 08.01.2014 թ-ի թիվ 10-14) ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 19.11.2013 թ-ի թիվ 2217708 հանձնարարագրի «Ալաշկերտ» ԱԿ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 25.11.2013 թ-ի թիվ 2217708 արձանագրությունը, որով արձանագրվել է «Ալաշկերտ» ԱԿ կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ժ/պ կողմից 29.11.2013 թ-ին հրապարակվել է թիվ 1108610 հանձնարարագիրը «Ալաշկերտ» ԱԿ-ում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ: Ստուգման արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 09.12.2013 թ-ի թիվ 1108610 ակտը, որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Ալաշկերտ» ԱԿ ներկայացուցչի և հսկիչ գնումն իրականացրած անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի քննարկման ընթացքում նշվեց, որ «Ալաշկերտ» ԱԿ-ում հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացրած պաշտոնատար անձանց նկատմամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածների 1-ին մասերով հարուցվել և քննվում է թիվ 62217013 գրեական գործը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածների 1-ին մասերով հարուցվել և քննվում է թիվ 62217013 գրեական գործը, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Ալաշկերտ» ԱԿ ներկայացուցչի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ու մ է՝**

«Ալաշկերտ» ԱԿ ներկայացուցչի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**